ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՄԻՇՅԱՆ

ՀԱՅ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Այսօր հայ սոցիոլոգիայի ձևավորման, կայացման և զարգացման փուլերի ուսումնասիրությունն ազգային և գիտական հետաքրքրությունների առարկա է դառնում: Հատկանշական է այն հանգամանքը, որ այս բնագավառում գրեթե չեն իրականացվել լուրջ գիտական ուսումնասիրություններ, և առկա բացը առավել կարևոր և արդիական է դարձնում խնդրի ուսումնասիրությունը: Այսօր, որոշ վերապահումներով, ուսումնասիրված կարելի է համարել XIX դարի հայ հասարակական, փիլիսոփայական միտքը՝ հանձինս Հ. Գաբրիելյանի, Ա. Սարգսյանի, Ռ. Միրումյանի և այլոց աշխատությունների, սակայն այդ ուսումնասիրությունները փիլիսոփայական են և վերաբերում են հայ փիլիսոփայական մտքի պատմությանը, և ոչ՝ սոցիոլոգիական: XX դարասկզբի հայ հասարակագիտության պատմության շրջանակներում ընդհանրապես բացակայում են գիտական աշխատություններ, չնայած՝ եղել են փորձեր, մասնավորապես, Վ. Սևյանն է փորձել «Հայ բուրժուական փիլիսոփայության քննական վերլուծություն» աշխատության շրջանակներում անդրադառնալ հայ հասարակագիտական մտքի ուսումնասիրմանը, սակայն ասել, թե այդ աշխատությունը, կամ նմանօրինակ փորձերը լուրջ գիտական ժառանգություն են, մանավանդ հայ սոցիոլոգիական մտքի համատեքստում, սխալ կլինի:

Վերոհիշյալ գործոններն ակնհայտորեն կրկնապատկում են այդ բնագավառի ուսումնասիրման ակտուալությունը: Սակայն մինչ հայ սոցիոլոգիայի պատմության ուսումնասիրմանն անդրադառնալը, նախ և առաջ պետք է պատասխանել մի շարք կարևոր հարցերի.

1. Արդյո՞ք ունենք այնպիսի հասարակագիտական ժառանգություն, և արդյո՞ք ունեցել ենք այնպիսի հայ հասարակագետներ, որոնց աշխատություններն իրոք կարող են լուրջ գիտական հետազոտությունների առարկա դառնալ:

2. Ինչքանո՞վ է կարևոր հայ սոցիոլոգիայի պատմության ուսումնասիրությունը:

3. Ե՞րբ է սոցիոլոգիան որպես ինքնուրույն գիտական դիսցիպլին ձևավորվել հայ հասարակագիտական մտքում:

Նախ խոսենք սոցիոլոգիայի, որպես ինքնուրույն գիտության, ձևավորման և կայացման գործընթացի մասին: Հարկ չեմ համարում մանրամասնել և առանձին անդրադառնալ այն բոլոր գործոններին, որոնք ուղղակի և անուղղակի նպաստել են սոցիոլոգիայի կայացմանը, սակայն նշենք մի քանի կարևոր հանգամանք:

Սոցիոլոգիայի ձևավորման սկիզբը պայմանականորեն համարվում է XIX դարի երկրորդ կեսը, երբ առաջին անգամ գիտական գործածության մեջ դրվեց «սոցիոլոգիա» տերմինը և սահմանվեց սոցիոլոգիայի՝ որպես ինքնուրույն գիտության, օբյեկտն ու առարկան: Կարելի է թվարկել մի շարք մտածողների՝ հանձինս Օգուստ Կոնտի, Հերբերտ Սպենսերի, որոնք իրենց անմիջական ներդրումն են ունեցել սոցիոլոգիայի կայացման գործում, սակայն սոցիոլոգիայի կայացումը ոչ թե ինքնանպատակ էր, այլ՝ պահանջ, միջոց հասկանալու և բացատրելու հասարակական համակարգում տեղի ունեցող բարդ օրգանական փոփոխությունները (արդյունաբերության զարգացում, անհատի՝ որպես արտադրական պրոցեսի ակտիվ սուբյեկտի ընկալման ձևավորում, ուրբանիզացիա և այլն), որոնք եթե ոչ անհնար, ապա գոնե ոչ ամբողջական կլիներ բացատրել այդ ժամանակաշրջանում առկա գիտելիքով, կամ գիտատեսական դրույթներով:

Այսպիսով, XIX դարում սոցիոլոգիական մտածողության առաջացումը և սոցիոլոգիայի, որպես ինքնուրույն գիտակարգի, առանձնացումը ժամանակի պահանջ էր, որն իր յուրահատուկ մոտեցմամբ, մեթոդաբանությամբ պետք է հնարավորություն տար բացատրելու հասարակական համակարգում տեղի ունեցող օրգանական փոփոխությունները: XIX դարավերջին և XX դարասկզբին սոցիոլոգիական մտածողությունն արդեն համակել էր ողջ եվրոպական հասարակագիտական միտքը՝ յուրաքանչյուր երկրում ստանալով յուրահատուկ դրսևորումներ:

Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից՝ կարելի է միանշանակորեն պնդել, որ այդ բնագավառում գիտական աշխուժությունը չէր կարող իր ազդեցությունը չունենալ հայ հասարակագետների, մտավորականների հայացքների վրա, նամանավանդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ մտավորականությունն այդ ժամանակաշրջանում գտնվում էր եվրոպական մտածողության անմիջական ազդեցության ներքո: Գիտական որակները նրանք ստանում էին հիմնականում Եվրոպայում(Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրիա և այլն) կամ Ռուսաստանում: Ընդ որում, սոցիոլոգիայով հետաքրքրվածությունը պակաս չի եղել նաև ցարական Ռուսաստանում: Դրա վառ վկայություններն են ժամանակի խոշոր եվրոպական սոցիոլոգների աշխատությունների բուռն թարգմանությունները (Օ. Կոնտ, Հ. Սպենսեր, Գ. Զիմել, Լ. Գումպլովիչ և այլոք) ու ռուս

սոցիոլոգների թողած գիտական ժառանգությունը՝ հանձինս Ն. Միխայլովսկու, Լավրովի, Մ. Կովալևսկու և այլոց:

Վերոհիշյալ գործոնները հիմնավոր փաստարկ են այն բանի, որ սոցիոլոգիական աշխարհայացքը, լինելով տվյալ ժամանակաշրջանի պահանջ, չէր կարող շրջանցել նաև հայ հասարակագիտական միտքը, որն այդ շրջանում գտնվում էր եվրոպական մտածողության անմիջական ազդեցության ներքո:

Այստեղ տեղին է դիմել օբյեկտիվ փաստերին, որոնք էլ առավել հիմնավոր ձևով թույլ կտան խոսել XIX դարավերջին և XX դարասկզբին հայ սոցիոլոգիայի գոյության, որոշակի ավանդույթների առկայության մասին, ինչն էլ թույլ կտա պնդել, որ տվյալ բնագավառը կարող է և պետք է դառնա լուրջ գիտական հետազոտությունների առարկա:

1. Նախ հարկ է նշել, որ հայ իրականության մեջ եղել են հասարակագետներ, որոնք ոչ միայն օժտված են եղել սոցիոլոգիական աշխարհայացքով, այլ ստացել են սոցիոլոգիական կրթություն և համապատասխան միջազգային գիտական որակավորում՝ հանձինս Երվանդ Ֆրանգյանի, որը սոցիոլոգիայի բնագավառում իր դոկտորական թեզը պաշտպանել է Գերմանիայում՝ Բեռլինի համալսարանում; Վահան Խորենու, որը պատմափիլիսոփայության դոկտորի գիտական կոչում է ստացել Լայպցիգի համալսարանում:

2. Ինչպես նաև, այս համատեքստում, հետաքրքրական է այն հանգամանքը, որ մեզ են հասել հայերեն թարգմանված սոցիոլոգիական մի շարք աշխատություններ, ինչպես նաև հայ հեղինակների հասարակագիտական ու այդ ժամանակաշրջանի սոցիոլոգների աշխատություններին վերաբերող քննադատական աշխատություններ (6-19):

Իսկապես, արևմտյան սոցիոլոգիական դպրոցներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենցել հայ սոցիոլոգիայի ձևավորման և կայացման գործում: Հետաքրքրական է, որ նախնական շրջանում հայ սոցիոլոգիական տեսական մտածողությունը ինչպես և արևմուտքում սկիզբ է առել դրապաշտական սոցիոլոգիայի շրջանակներում: Մասնավորապես Հ. Շաքարյանը(տես 4), Տ. Հարությունյանը(տես 22), անդրադառնալով XIX դարավերջի հայ դրապաշտական դպրոցի առանձնահատկություններին, փաստում են դրապաշտական սոցիոլոգիայի հեղինակության և կայացվածության մասին՝ մասնավորապես, այդ համատեքստում, արժևորելով Գր. Արծրունու, Ե. Տեմիրճիպաշյանի և Գ. Կոստանդյանի հասարակագիտական ժառանգությունը, որոնց աշխատություններում տարորոշվում են Կոնտի հասարակական դինամիկան մեկնաբանող տեսական հայեցակարգերն ու սպենսերյան օրգանիցիստական սոցիոլոգիայի հիմնադրույթներն ու առանձնահատկությունները:

Հետագայում, մասնավորապես XX դարասկզբին հայ սոցիոլոգիան, արդեն իսկ գտնվելով եվրոպական և ռուսական սոցիոլոգիական դպրոցների ազդեցության ներքո, կայանում և զարգանում էր համահունչ այդ ուղղություններին: Հայ սոցիոլոգիայի ձևավորմանն այդ ժամանակաշրջանում նպաստում էին թե՛ մարքսիստական, թե՛ սոցիալ-հոգեբանական և թե՛ «սուբյեկտիվիստական» սոցիոլոգիական հեղինակավոր և ազդեցիկ դպրոցներն ու ուղղությունները:

Այդ շրջանում էր, որ հայ հասարակագիտական շրջանակներում քննարկման նյութ էր դարձել սոցիոլոգիայի, որպես ինքնուրույն գիտության կարգավիճակի հիմնահարցը: Գիտակցելով առկա հասարակական հիմնախնդիրները՝ Ե. Ֆրանգյանը նշում է, որ «Մեր դարում հասարակական բնույթ կրող հարցերն են բռնում կենտրոնական տեղ: Սոցիալական փիլիսոփայությունը կենտրոնական տեղ է գրավում փիլիսոփայական մտահղացումների մեջ» (15,3): Սոցիալական փիլիսոփայությունից անցնելով սոցիոլոգիային Ե. Ֆրանգյանն այն դիտարկում է որպես նորմատիվ գիտություն և ամրագրում, որ «նորմատիվ գիտությունները կամաց-կամաց առաջնակարգ տեղ են գրավում գիտությունների շարքում» (15,4): Մ. Վարանդյանն իր հերթին սոցիոլոգիայի մեջ է տեսնում հասարակագիտության ապագան, որն եկել է լրացնելու այդ բնագավառում առկա բացը: Նա նշում է. «Սոցիոլոգիան մի գիտություն է, որ լինելով ամենաբարդը գիտությունների երկարածիգ սանդուղքի վրա, թառած է այդ սանդուղքի գագաթին՝ հանդիսանում է միանգամայն իբրև ամենահետաքրքրականն ու հրապուրիչը մեզ համար, քանի որ նա զբաղվում է մեր ցեղի, մեր մարդկային տեսակի ճակատագրով, ազգերի և ժողովուրդների կազմակերպման և զարգացման օրենքներով» (20,XIX):

Սոցիոլոգիան հայ հասարակագիտական միջավայրում դիտարկվում է, որպես համակարգված գիտելիք՝ ուղղված հասարակության համակարգային հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Այդ համտեքստում Բ. Իշխանյանը նշում է, որ «Սոցիոլոգիան ուսումնասիրում է հասարակությունն որպես ամբողջ: Սոցիոլոգիան կոչված է քննելու ամբողջն իր էությամբ, ամբողջություն կազմող մասերի հարաբերությունները, ընդհարումները, կապակցությունները, որոնք միասին տալիս են ամբողջի պատկերը» (10,11):

Իսկապես, XIX դարավերջին և XX դարասկզբին հայ իրականության մեջ սոցիոլոգիան դիտարկվել է որպես ժամանակակից, հետաքրքրական և ինքնուրույն գիտություն, որը, լինելով տվյալ ժամանակաշրջանի պահանջ, եկել էր լրացնելու հասարակագիտական բնագավառում առկա բացն ու տալու ամբողջական բացատրություն հասարակական համակարգում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխություններին: Սակայն, հայ հասարակագետները

կանգ չեն առնում միայն սոցիոլոգիայի, որպես ինքնուրույն գիտության, դերի և նշանակության սահմանման վրա, այլ, ազդվելով եվրոպական հասարակագիտական ուղղություններից, մշակում են սեփական սոցիոլոգիական հայեցակարգերը՝ այն ուղղելով հասարակական հիմնախնդիրների և հասարակական սուբյեկտների փոխհարաբերությունների բացատրությանը:

Հայ սոցիոլոգիան իր էվոլյուցիայի ընթացքում գրեթե նույն տրամաբանական հաջորդականությունն է ունեցել, ինչ արևմտյան սոցիոլոգիական միտքը: Սակայն այն միաժամանակ ունեցել է իր առանձնահատկությունները, քանի որ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ յուրաքանչյուր սոցիոլոգ հանդես է գալիս իր ժամանակաշրջանի և կոնկրետ հասարակական համակարգի ուսումնասիրության դիրքերից, ապա պետք է փաստել, որ որակապես տարբեր էին հայ հասարակական միջավայրն ու արևմտաեվրոպական, ինչ-որ առումով նաև ռուսական հասարակական միջավայրերը: Եթե Սպենսերի ուսումնասիրության օբյեկտն էր անգլիական ազատական հասարակությունը, ապա հայ դրապաշտական սոցիոլոգիայի ներակայացուցիչ Արծրունու հետազոտական օբյեկտն էր ազգային ինքնության հիմնախնդիրներով և ազատագրական պայքարով տոգորված հայ հասարակությունը:

Այս համատեքստում հասարակական հիմնախնդիրներն հայկական միջավայրում առաջնահերթ կրում էին ազգային բնույթ: Այդ պայքարի շուրջ են կառուցվել հայ սոցիոլոգների հայեցակարգերը: Այդ է պատճառը, որ հայ դրապաշտական միտքը, ի տարբերություն ֆրանսիական դրապաշտության, որը զարգացավ լուսավորականության քննադատության հենքի վրա, հանդես եկավ, որպես հայ լուսավորականության հայեցակարգերի շարունակող ու գիտական հիմքերի վրա դրեց այն՝ հանձինս հայ դրապաշտական սոցիոլոգիայի:

Ընդհանրապես հայ սոցիոլոգիան XIX դարավերջին և XX դարասկզբին զարգանում էր ազգային ազատագրական պայքարի համատեքստում և առկա բոլոր սոցիոլոգիական դպրոցներն(դրապաշտական, սոցիալ-հոգեբանական, մարքսիստական, «սուբյեկտիվիստական») իրենց հայացքն ուղղում էին հայ հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքային հիմնախնդիրներին:

Խորացնելով իրենց հասարակագիտական գաղափարները՝ հայ հեղինակներն անդրադառնում են հասարակական դինամիկային, ցույց տալիս հասարակությունների փոխակերպման և զարգացման փուլերն ու տիպերը, այդ համատեքստում փորձելով տեսնել հայ հասարակության զարգացման և առաջընթացի հնարավորություններն ու փորձում հիմնավորել ազգային ազատագրական պայքարի միջոցներն ու ուղիները: Այդ տեսանկյունից արժեքավոր են Բ. Իշխանյանի «Ազգային պրոգրեսը և դասակարգային շահերը», Ա.

Կիտուրի «Պատմության փիլիսոփայություն», Ի. Ֆրանգյան «Հասարակագիտական էտյուդներ» և այլ աշխատություններ ու հոդվածաշարեր:

Այսպիսով, կարելի է նշել, որ հայ հասարակագիտական միտքը XIX դարավերջին և XX դարասկզբին ունեցել է լուրջ ներկայացուցիչներ, որոնց մոտեցումները և՛ միմյանցից տարբեր, և՛ միաժամանակ յուրօրինակ են: Հայ իրականության մեջ եղել թե՛ համակարգված սոցիոլոգիական հայեցակարգեր ունեցող սոցիոլոգներ՝ հանձինս Արծրունու, Իշխանյանի, Ֆրանգյանի և այլոց, թե՛ հետաքրքրական սոցիոլոգիական մտածողությամբ և աշխարհայացքով օժտված այնպիսի հասարակագետներ, ինչպիսին են Գ. Կոստանդյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Դ. Անանունը, Վ. Խորենին, Մ. Վարանդյանը, Արսեն Կիտուրը, Ռ. Խանազատը և այլոք:

Վերոհիշյալ հայ հասարակագետներին, նրանց աշխատություններին անդրադառնալով՝ այս հոդվածի շրջանակներում նպատակ չենք դրել մանրամասնել և ամբողջական վերլուծել նրանց հայացքները, այլ ցույց տալ և հիմնավորել, որ իսկապես այսօր կարելի է խոսել XIX դարավերջին և XX դարասկզբին հայ սոցիոլոգիայի գոյության մասին, և որ հնարավոր է և անհրաժեշտ այն դարձնել լուրջ գիտական հետազոտությունների առարկա: Ընդ որում, եթե XIX դարավերջի դիտարկումը, որպես հայ սոցիոլոգիայի ձևավորման սկիզբ, հիմնավոր է և ակնհայտ, ապա ինչու՞ հատկապես մինչև XX դարասկիզբ: Այստեղ հայ սոցիոլոգիայի ձևավորումը դիտարկվում է որպես գործընթաց, որի սկիզբը ոչ թե հստակ տարեթիվ է, այլ ժամանակահատված, և տվյալ դեպքում այն, սկսվելով XIX դարավերջին, ավարտվեց XX դարի 20-ական թվականներին, երբ խորհրդային կարգերի հաստատումով ճնշվեց և արգելվեց սոցիոլոգիան՝ որպես «բուրժուական գիտություն», և միաժամանակ խզվեց կապը Խորհրդային Հայաստանի և հայրենիքից դուրս գործող հայ մտավորականության միջև:

Ակնհայտ է դառնում, որ սոցիոլոգիական մտածողությունը հայ հասարակագիտության շրջանում եղել է և, ինչու չէ, մեծ հավանականությամբ ունեցել իր ավանդույթներն ու յուրահատկությունները, որի բացահայտումն ու ուսումնասիրությունը հայ ազգային գիտամշակութային տեսանկյունից ոչ միայն հետաքրքրություն, այլ նաև հասարակական պահանջ է ներկայացնում: Հայ սոցիոլոգիայի պատմության ուսումնասիրությունը ունի առաջնահերթ ազգային նշանակություն: Կարևոր է պարզել, թե համաշխարհային սոցիոլոգիական մտածողության շրջանակներում ինչ դիրք է գրավում հայ սոցիոլոգիան: Երկրորդ կարևոր հանգամանքը հայ հասարակագիտական մտքի անցյալի և ներկայի միջև կապի հաստատման անհրաժեշտությունն է:

Գրականության ցանկ

1. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, Հտ. 4, Երևան, 1965
2. Միրումյան Ռ., Պատմափիլիսոփայական հայեցակարգեր XIX դարի հայ փիլիսոփայության մեջ. մեթոդաբանական վերլուծություն, Երևան, 2003
3. Սևյան Վ., Հայ բուրժուական փիլիսոփայության քննական վերլուծություն, Երևան 1971
4. Շաքարյան Հր., Պոզիտիվիզմի դրսևորումը XIX դարի երկրորդ կեսի հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ, Հայկական ՍՍՌ, Գիտությունների Ակադեմիա, Տեղեկագիր, հասարակական գիտություններ, Երևան 1958, N11
5. Սարգսյան Ա., Ուրվագիծ XIX դարի հայ իմաստասիրության» Երևան, 2001
6. Լոռիա Ախիլլ, Սոցիոլոգիա, թարգ. Pessimist (Իշխանյան Բ.), Թիֆլիս, 1909
7. Բոմբարդ է., Պոզիտիվիզմ, ֆրանս. թարգ. Ռուբեն, Թիֆլիս, 1913
8. Լը Պոն Գյուստավ, Ամբոխին հոգեբանությունը, թարգ. Եթմեքճյան Ս., Տրապիզոն, 1911
9. Արծրունի Գր., Գրիգոր Արծրունու աշխատությունները, Հտ. 1, Թիֆլիս, 1904
10. Իշխանյան Բ., Ի՞նչ է հասարակությունը, Թիֆլիս, 1909
11. Իշխանյան Բ., Ազգային պրոգրեսը և դասակարգային շահերը, Թիֆլիս, 1908
12. Իշխանյան Բ., Հասարակական գաղափարներ, Թիֆլիս, 1910
13. Կոստանդյան Գ., Մեթոդի վրա, Երևան, 1961
14. Տեմիրճիպաշյան Ե., Երկեր, Երևան, 1968
15. Ֆրանգյան Ե., Հասարակագիտական էտյուդներ, Բաքու, 1917
16. Ֆրանգյան Ե., Մեր փիլիսոփայական աշխարհայացքը, Փարիզ, 1929
17. Ֆրանգյան Ե., Ն.Կ. Միխայլովսկին որպես փիլիսոփա-սոցիոլոգ» Երևան, 1911
18. Ավդալբեկյան Թ., Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան, Երևան, 1926
19. Հովհաննիսյան Ս., Փիլիսոփա, սոցիոլոգ Հ. Սպենսերը ժամանակակից աշխարհայեցողության առջև, Թիֆլիս, 1907
20. Վարանդյան Մ., Հոսանքներ, Ժնև, 1910
21. Կիտուր Արսեն, Պատմության փիլիսոփայություն, Կ. Պոլիս, 1911
22. Арутюнян Т., Проникновение позитивизма в Арминию, Вестник Ереванского университета, Ереван,1987, N3
23. Гумплович Л., Очерк истории социологии, Спб. 1899
24. Конт О., Дух позитивной философии, Спб.: "Вестник знания", 1910
25. Михайловский Н.К., Полное собрание сочинений, Т1 Спб.: "Русское богатство", 1911
26. Спенсер Г., Сочинения Герберта Спенсера, Спб.:Сытин, 1898